Գարուն

ՄԱՐՏ 25 - ԱՊՐԻԼ 5 2014 Թ. ԹԻՎ 7 (2029)

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

...Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է Մաքսային միությանն անդամակցելու պետական քաղաքականություն, որի արդյունքում անհրաժեշտություն է առաջացել ագրոարդյունաբերության ոլորտի օրենսդրական դաշտը համապատասխանեցնել Մաքսային միության օրենսդրությանը: Կառավարության նիստում գործադիրն ուժը կորցրած է ճանաչել այդ խնդրին վերաբերող իր նախկին որոշումը: Մաքսային միության տարածքում գործում են 2013 թվականին հաստատված մսի և մսամթերքի, կաթի և կաթնամթերքի, մրգի և բանջարեղենի հյութերի և հացահատիկի անվտանգության տեխնիկական կանոնակարգերը, որոնք Հայաստանի՝ Մաքսային միությանն անդամակցելուց հետո, անհրաժեշտ կլինի տեղայնացնել: Տեղայնացման ենթակա կլինեն նաև սննդամթերքի բոլոր տեսակների, այդ թվում՝ թարմ պտուղ-բանջարեղենի, ձվի, ինչպես նաև գարեջրի հիգիենային և անվտանգությանը, մակնշմանը և չփվող նյութերին ներկայացվող պահանջները, թույլատրելի սննդային հավելումները, դրանց շուկայահանման ընթացակարգերը և այլն:

...ՀՀ կառավարության 2013թ. հունիսի 20-ի որոշմամբ՝ Բելառուսի Հանրապետությունից տրակտորներ և հարակից սարքավորումներ ձեռք բերելու նպատակով, «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի կողմից, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամին է փոխանցվել 900 մլն դրամ, որով ներկրվել է 100 տրակտոր և 125 միավոր հարակից սարքավորում: Այժմ անհրաժեշտություն է առաջացել ներկրել ևս 100 տրակտոր, կոմբայններ և սարքավորումներ:

ՅՐՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանը, ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանի, արտակարգ իրավիճակների փոխնախարար Հայկարամ Մխիթարյանի ուղեկցությամբ այցելել է Արարատի և Արմավիրի մարզեր՝ ծանոթանալու վերջին օրերին եղանակային կտրուկ փոփոխությունների հետևանքով ստեղծված իրավիճակին, ինչպես նաև մարզերում իրականացվող հակակարկտային միջոցառումներին:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ ԵՎ ԸՆԹԱՑՔ

2014թ. շարունակվելու է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» վարկային ծրագիրը, որը գործողության մեջ է դրվել 2011 թվականի հուլիսից:

Այն իրականացվում է հանրապետության 6 մարզի (Արագածոտն, Լոռի, Շիրակ, Տավուշ, Գեղարքունիք, Սյունիք) 55 համայնքում: Խնայողությունների հաշվին, ծրագիրն իրականացվելու է լրացուցիչ ևս 35 համայնքում: Նպատակը՝ աջակցել անասնապահական ուղղվածություն ունեցող բարձրլեռնային և սահմանամերձ համայնքներին՝ հեռագնա արոտների անցանելիության ապահովման, ջրարբիացման, դեգրադացված արոտների վերականգնման, ինչպես նաև կաթի ընդունման և վերամշակման կարողությունների ստեղծման միջոցով: Համայնքներում ստեղծելով արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվներ՝ խորհրդատվական համակարգի միջոցով աջակցություն կցուցաբերվի նորարարական տեխնոլոգիաների ներդրմանը, անասնաբուժական և տոհմային աշխատանքների բարելավմանը: ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչության պետ Հրաչյա Ծպնեցյանը նշեց, որ սպառողական կոոպերատիվներ են հիմնադրվել 67 համայնքում, իսկ 47-ում՝ ավարտվել են արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքները: Մասնավորապես՝ կառուցվել է 114 կմ ջրագիծ, տեղակայվել 150 խմոց: Արդյունքում՝ լիարժեք օգտագործելի են դարձել շուրջ 100 հազ. հա հեռագնա արոտներ, 60 հազ. հա գյուղամերձ արոտավայրերի ծանրաբեռնվածության մեղմման արդյունքում՝ բարելավվել է բնապահպանական վիճակը: 48 համայնքի «Արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներին տրամադրվել է 66 միավոր անիվավոր տրակտոր և 258 միավոր գյուղատնտեսական այլ տեխնիկա:

↳3

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն օրերս ընդունել է Իտալիայի Ումբրիա նահանգի առևտրային գործակալության պատվիրակությանը՝ գործակալության գործադիր տնօրեն Մասսիմիլիանո Տրեմիտերրայի գլխավորությամբ:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ պարոն Տրեմիտերրան ներկայացրել է իրենց գործունեությունը: Նշելով, որ գործակալությունը Ձեռնարկությունների եվրոպական ցանցի (EEN) անդամ է, և առևտրային կազմակերպություններին և արդյունաբերական ձեռնարկություններին տրամադրում է բիզնես խորհրդատվություն և տեղեկատվություն արտաքին շուկաների վերաբերյալ, տարբեր երկրներում իրականացնում է տարածաշրջանային զարգացման ծրագրեր: Այցի նպատակը՝ Հայաստանի Հանրապետության ագրովերամշակման, հատկապես կաթնարդյունաբերության բնագավառին ծանոթանալն է և երկկողմ համագործակցության հնարավորությունների ուսումնասիրությունը:

Ողջունելով հյուրերին՝ նախարար Ս. Կարապետյանը նշել է, որ կաթի արտադրության և վերամշակման բնագավառը Հայաստանի գյուղատնտեսության առաջնային ուղղություններից է և ունի զարգացման մեծ ներուժ: «Այն զարգացնելով՝ հնարավոր կլինի արտադրել բարձր որակի կաթնամթերք, մասնավորապես պանրատեսակներ, ավելացնել գյուղական ազգաբնակչության եկամուտները»,- ասել է նախարարը՝ կարևորելով գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման, պետական աջակցության ծրագրերի իրականացման, սննդամթերքի անվտանգության կարողությունների ուժեղացման, վերամշակման ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրման հարցերը: Հայաստանի և Իտալիայի Ումբրիա նահանգի աշխարհագրական և բնակլիմայական պայմանների նմանությունների համեմատականով, պարոն Տրեմիտերրան իրատեսական է համարել ապագա համագործակցության հնարավորությունը՝ հավելելով, որ գործակալությունը հնարավորություն ունի համակարգելու արտադրություն, կրթություն, հետազոտություն և հավաստագրում շղթան, և պատրաստ է այդ ոլորտի իր գիտելիքներն ու փորձը փոխանցել հայկական կողմին:

Առաջիկա օրերին, համագործակցության հնարավոր ուղղությունները նախանշելու համար, պատվիրակությունն այցելելու է կաթի վերամշակման ձեռնարկություններ:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ

Ի ՆՊԱՍՏ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

Օրերս աշխատանքային այցով Սյունիքի մարզում էր ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը: Մարզպետ Վահե Հակոբյանի ուղեկցությամբ, նախարարը նախ եղել է Սիսիանի տարածաշրջանի Բռնակոթ համայնքում, ծանոթացել ֆերմեր Սեյրան Առաքելյանի տավարաբուծական ֆերմայի հիմքի վրա գործող կաթի վերամշակման արտադրամասի գործունեությանը, զրուցել աշխատակիցների հետ:

Այստեղ արտադրվում են Լոռի և Չանախ պանիրներ, կարագ, օրական վերամշակվում է ինչպես սեփական արտադրության, այնպես էլ համայնքից մթերվող մեկ տոննա կաթ: Առաջիկայում նախատեսվում է կաթի վերամշակման ծավալները հասցնել 2-3 տոննայի, ընդլայնել արտադրանքի տեսականին:

Այնուհետև նախարարն այցելել է Կապանի տարածաշրջանի Սյունիք համայնքում կառուցվող հատիկային կերերի մթերման, պահեստավորման և լիարժեք համակցված կերերի արտադրության ձեռնարկություն: Գերմանական սարքավորումներով հագեցած այս ձեռնարկությունը, մինչև տարեվերջ, կարտադրի տարեկան 2500 տոննա եվրոպական չափանիշներին համապատասխանող համակցված կերեր՝ բոլոր սեռահասակային խմբի կենդանիների համար՝ ամբողջությամբ բավարարելով վերջինիս պահանջարկը մարզում և մեծապես նպաստելով մարզի անասնապահության զարգացմանը:

Այցելության հաջորդ կանգառը Կապանի տարածաշրջանի Աճանան գյուղն էր, ուր նախարարը ծանոթացել է խոզաբուծական ժամանակակից համալիրի շինարարության ընթացքին: Այն կգործարկվի մինչև տարեվերջ, կունենա 200 գլուխ մայրակազմ և տարեկան կարտադրի 300 տոննա միս: Ամբողջությամբ մեքենայացված գործընթացներ (կերի արտադրությունից մինչև սպանդանոց) ունեցող համալիրի սարքավորումները ներկրվել են Ավստրիայից: Շուտով եվրոպական երկրներից կներկրվի նաև լավագույն ցեղերի մայրական կազմը: Համալիրը կապահովի 30 աշխատատեղ: Նման տեխնոլոգիաներով խոզաբուծական համալիր Հայաստանում կգործարկվի առաջին անգամ:

↳2

1 ⇨

ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

Փոխվարչապետը նախ այցելել է Արմաշ համայնք և մարզպետ Արամայիս Գրիգորյանի, Արմաշի և շրջակա մյուս համայնքների ղեկավարների մասնակցությամբ խորհրդակցություն է անցկացրել: Համայնքների ղեկավարները ներկայացրել են ցրտահարությունների հետևանքով ստեղծված իրավիճակը, նշել, որ համայնքներին վնաս է պատճառել նաև ուժեղ քամին: Քննարկվեցին ցրտահարության հետևանքները մեղմելու հնարավորությունները՝ մասնավորապես բանջարաբոստանային մշակաբույսերի ցանքատարածություններն ավելացնելու և այլ միջոցներով: Ինչպես համայնքների ղեկավարներն, այնպես էլ բնակիչները փոխվարչապետի և նախարարի հետ հանդիպմանը ներկայացրել են վարկային պարտավորությունների, սերմացուի, ոռոգման ջրի անհրաժեշտ պահանջարկի բավարարման հետ կապված հարցեր: Կարևորվել է նաև հակակարկտային միջոցառումների իրականացումը: Փոխվարչապետը տեղեկացրել է, որ առաջիկա օրերին մարզում կտեղակայվի 18 հակակարկտային կայան, որից 7-ը՝ Արմաշ համայնքի տարածքում: Այն հնարավորություն կտա էապես նվազեցնել կարկտահարության վտանգը, քննարկվում է նաև հակակարկտային կայանների երկրորդ գոտին ունենալու հնարավորությունը: Այնուհետև, Արարատի մարզպետարանում կայացած հանդիպմանը, որին մասնակցում էին համայնքապետեր, Գյուղատնտեսական աջակցության մարզային կենտրոնի (ԳԱՄԿ), ջրօգտագործողների ընկերությունների (ՋՕԸ-երի) ղեկավարներ, փոխվարչապետն անդրադարձել է ստեղծված իրավիճակին, հետագա անելիքներին և համայնքներում բարձրացված մտահոգություններին: «Կփորձենք համագործակցել, որպեսզի վարկային կազմակերպությունները գործընթաց նախաձեռնեն ստեղծված իրավիճակի համար»,- նշել է փոխվարչապետը: Ջրային տնտեսության պետական կոմիտեին հանձնարարվել է գարնանային սելավային ջրերն ինքնահոս համակարգերի միջոցով հասանելի դարձնել գյուղացիական տնտեսություններին: ՀՀ գյուղատնտեսության նախարար Ս. Կարապետյանն, անդրադառնալով վնասի ծավալներին՝ տեղեկացրել է, որ դրանք ճշգրտվում են, և վնասի հստակ չափը հայտնի կլինի առաջիկա օրերին: Գյուղնախարարությունը ներկայումս գյուղացիական տնտեսությունների համար ցրտահարության հետևանքները մեղմելու ուղղությամբ է աշխատանքներ իրականացնում: Նախարարությունը մասնավորապես աշխատում է սերմ ներկրող ընկերությունների հետ՝ տնտեսություններին բանջարաբոստանային մշակաբույսերի որակյալ սերմացուով ապահովելու համար: Ներկրվել են նաև գարնանացան գարու և կերային այլ մշակաբույսերի սերմեր: Նախարարը կարևորել է ցանքատարածությունների ավելացումը և այլ մշակաբույսերի մշակումը: Անհրաժեշտության դեպքում պատրաստ են բավարարել նաև հողօգտագործողներին մատչելի գնով տրվող պարարտանյութի և դիզվառելիքի լրացուցիչ պահանջարկը, ինչպես նաև նշել, որ կառավարությունն ավելի արդյունավետ պայքար է մղելու մարզում կարտոֆիլի և լոլիկի ցեց վնասատուի դեմ: Պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ առաջիկա օրերին համայնքի ղեկավարները կհաշվարկեն սերմացուի պահանջարկը և դրանց տեսակների ու ծավալների վերաբերյալ տեղեկատվություն կներկայացնեն մարզպետարան:

Ստեղծված իրավիճակին ծանոթանալու նպատակով փոխվարչապետը, Արմավիրի մարզի Մյասնիկյանի համայնքապետարանում՝ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանի, մարզպետ Աշոտ Ղահրամանյանի, Բաղրամյանի տարածաշրջանի համայնքների և ջրօգտագործողների ընկերությունների (ՋՕԸ) ղեկավարների մասնակցությամբ, խորհրդակցություն է անցկացրել: Համայնքների ղեկավարները ներկայացրել են ցրտահարությունների հետևանքով ստեղծված իրավիճակը: Քննարկվել են վարկային պարտավորությունների մեղմմանը, առավել մատչելի ոռոգման ջրով, անհրաժեշտ սերմացուով ապահովմանը վերաբերող հարցեր: Մարզի գյուղացիական տնտեսությունների մի մասն արդեն երկրորդ տարին է, ինչ զգալի վնասներ է կրում: Համայնքապետերի կողմից առաջարկվեց այդ տնտեսությունների նկատմամբ առանձնահատուկ մոտեցում ցուցաբերել: Փոխվարչապետը տեղեկացրել է, որ վնասի չափերը ճշգրտելու համար ներկայումս աշխատանքներ են իրականացվում: Առաջիկայում տուժած գյուղացիական տնտեսությունների աջակցության վերաբերյալ առաջարկություններ կներկայացվեն կառավարություն: Նա խոստացավ, որ Արմավիրի մարզի դեպքում հաշվի կառնվի նաև համայնքապետերի մատնանշած հանգամանքը: Ջրային տնտեսության պետական կոմիտեն նույնպես քննարկում է գյուղացիական տնտեսությունների համար առավել մատչելի ոռոգում ապահովելու հարցը:

Վարկային պարտավորությունների խնդրին անդրադառնալով՝ Ա. Գևորգյանը տեղեկացրել է, որ հարցը քննարկվել է Կենտրոնական բանկի ղեկավարության հետ, պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ կձևավորվեն աշխատանքային խմբեր՝ համայնքներում տնտեսությունների հետ անհատական կարգով աշխատանքներ իրականացնելու և պարզելու անցած տարի կարկտահարությունից տուժած տնտեսությունների համար կիրառված մեխանիզմների նպատակահարմարության հարցը: Գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը ներկայացրել է նախարարության կողմից իրականացվող ցրտահարության հետևանքների մեղմանն ուղղված աշխատանքներն ու միջոցառումները:

1 ⇨

Ի ՆՊԱՍՏ ՄԱՐԶԻ ՁԱՐԳԱՑՄԱՆԸ

Օրվա երկրորդ կեսին ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը մասնակցել է մարզխորհրդի նիստին, իր ելույթում ամփոփիչ անդրադարձ կատարել 2013 թվականին, հաջողված ու արդյունավետ համարել այն հանրապետության և Սյունիքի մարզի համար:

Նախարարը նշել է, որ պետական օժանդակման ծրագրերի շնորհիվ, գյուղացին կրկին հնարավորություն ունի մատչելի գներով ձեռք բերել բարձրորակ սերմացու, պարարտանյութ ու դիզելային վառելանյութ: Նա մասնակիցների ուշադրությունը հրավիրել է գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների ավելացման անհրաժեշտությանը՝ հաշվի առնելով մարզում առկա ներուժը, ինչպես նաև մարզի ռազմավարական նշանակությունը: Առանձնապես կարևորվել է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագիրը, որով մարզի մի շարք համայնքներում հիմնադրված արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվները կարճ ժամանակում հասել են որոշակի հաջողությունների: Ընթացիկ տարում նախատեսվում է խնայված միջոցների հաշվին մարզի ևս 7 համայնքներ ընդգրկել նշված ծրագրում:

Հանդիպման ավարտին, նախորդ տարվա լավ աշխատանքի ու բարձր արդյունքների համար, նախարարը «Գյուղատնտեսության նվաճումների» ոսկե մեդալներով պարգևատրել է մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության ու բնապահպանության վարչության պետ Սամվել Թանգյանին և Մեղրու տարածաշրջանի Ալվանք համայնքից այգեգործ Ալեքսան Հովհաննիսյանին: Մարզի գյուղատնտեսության ևս 9 առաջավորներ արժանացել են գյուղատնտեսության նախարարության շնորհակալագրերի:

ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ

ԿՈՐՅՈՒՆ ՄԿՐՏԻՉԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Լրանում է Կորյուն Հովակիմյանի ծննդյան 70-ամյակը: ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը շնորհավորում է 70-ամյա հոբելյանի առթիվ, մաղթում քաջառողջություն և ընտանեկան երջանկություն:

Նրա կյանքի ուղին նշանավորված է աշխատանքային բազմաբեղուն և հայրենանվեր գործերով, որոնք ինքնատիպ հետք են թողել Հանրապետության կարտոֆիլագործության և ձկնաբուծության բնագավառներում: Ծանրակշիռ է նաև Կորյուն Հովակիմյանի լուսան Նիդերլանդների կառավարության կողմից Հայաստանում իրականացվող գյուղատնտեսական ծրագրերի և նոր տեխնոլոգիաների (PSO) ներդրման և կիրառման գործում:

Նա ծնվել է 1944թ. ապրիլի 10-ին, Իրանի Համադան քաղաքում: 1988թ., ավերիչ երկրաշարժից անմիջապես հետո, Կ. Հովակիմյանը Նիդերլանդներում ներգրավվել է Հայաստանին օգնություն տրամադրող հանձնաժողովի ստեղծման գործին, որի միջոցով իրականացվել է մեծածավալ աջակցություն բժշկական և կրթական համակարգերին:

Այժմ «Ագրո Նախագիծ Կենտրոն Հայաստան-Հոլանդիա» ընկերության հիմնադիր տնօրենն է: Ընկերության ստեղծման նպատակը՝ Հայաստանի և Հոլանդիայի միջև գործարար ոլորտի խթանման ապահովումն է: Կենտրոնը գործում է շուրջ 25 տարի: Հանդիսանալով հոլանդական «Ագրիքո» ԲՎ /Կարտոֆիլի տնկանյութի ներկրում/ և «Քոփփեես» ԲՎ /ձկնաբուծության զարգացում/ ընկերությունների պաշտոնական ներկայացուցիչը՝ Կորյուն Հովակիմյանի նախաձեռնությամբ և հոլանդական «Ագրիքո» ընկերության, Եվրոհամայնքի, Նիդերլանդների և Հայաստանի կառավարությունների հայ ֆերմերների հետ համագործակցության արդյունքում, ամեն տարի Հայաստան է ներկրում շուրջ 1500 տոննա կարտոֆիլի տնկանյութ: 1998թ.-ից Կորյուն Հովակիմյանը վերջնականապես հաստատվել է հայրենիքում: Ամուսնացած է, ունի 2 զավակ և 4 թոռնիկ:

Կարտոֆիլի սերմնաբուծության զարգացման բնագավառում կատարված մեծածավալ աշխատանքի շնորհիվ, վերջին տասը տարիներին Հանրապետությունում միտվում է պարենային կարտոֆիլի ծավալների կայուն աճ, և մեր հանրապետությունը կարտոֆիլ ներմուծող երկրից դարձել է արտահանող երկիր:

Շնորհիվ նրա համեստության ու շրջապատի նկատմամբ բարյացակամ վերաբերմունքի՝ վայելում է գյուղատնտեսության բնագավառի աշխատողների սերն ու հարգանքը:

Հայաստանի Հանրապետության բարձր վերարտադրության, տնկանյութերի արտադրության զարգացման գործում ունեցած մեծ ավանդի, գյուղատնտեսության ոլորտում երկարամյա բեղմնավոր գործունեության և ծննդյան ամյակի առթիվ, ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը «Ագրո նախագիծ կենտրոն Հայաստան-Հոլանդիա» ընկերության հիմնադիր տնօրեն Կորյուն Հովակիմյանին պարգևատրել է շնորհակալագրով:

Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնը միանում է բոլոր շնորհավորանքներին, մաղթում քաջառողջություն, գիտաարտադրական արգասաբեր և բեղուն գործունեություն:

ՀԱՎԱՏԱՐԻՄ ԻՐ ԳՈՐԾԻՆ



Ծննդյան օրվա և կանանց տոնի առթիվ Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնը ջերմորեն շնորհավորում է Գայանե Հակոբյանին, մաղթում քաջառողջություն, բարեկեցություն և նորանոր հաջողություններ նվիրական գործում: Թող գարունները շատ երկար ուղեկցեն քեզ, սիրելի Գայանե, և լուսավորեն քո ճանապարհը:

ԳԱՀԿ

1֊ՔԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ ԵՎ ԸՆԹԱՑՔ

Հանրապետության 6 մարզերում իրականացվել է անասնաբույժների ուսուցում, որին մասնակցել է 76 մասնագետ: Այդ թվում, 67 անասնաբույժների փրամադրվել են սարքավորումներ և գործիքներ:

Ինչ վերաբերում է 2014 թվականին, ապա նախատեսվում է լրացուցիչ ընդգրկված 20 համայնքներում կառուցել շուրջ 50 կմ երկարությամբ ջրարբիացման համակարգ: Համայնքների արոտօգտագործողների կոոպերատիվներին կտրամադրվի 25 միավոր տրակտոր և 75 միավոր գյուղատնտեսական այլ տեխնիկա:

Ծրագրով նախատեսված 6 մարզերից 3-ում՝ (Արագածոտնի, Սյունիքի, Գեղարքունիքի) կստեղծվեն անասնաբուժական սպասարկման կենտրոններ, որոնք անասնաբուժական, արհեստական սերմնավորման ծառայություններ կմատուցեն անասնապահական տնտեսություններին:

Ծրագրի իրականացումը կնպաստի բնական կերահանդակների օգտագործման արդյունավետության բարձրացմանը, շուրջ 25%-ով գյուղատնտեսական կենդանիների մթերատվության և տնտեսությունների եկամուտների ավելացմանը: «Արտադրության կազմակերպման կոոպերատիվ ձևի ներդրման արդյունքում՝ լուծում կստանան անասնապահական մթերքներ արտադրողից մինչև սպառող շղթայի օղակներում առկա խնդիրները, մասնավորապես՝ կաթի հավաքման կետերի ձևավորման, հումքի վերամշակման կարողությունների ստեղծման միջոցով, անասնապահության ճյուղում կապահովվի առավել բարձր ավելացված արժեքի ստացում»,- հավելեց Հ. Ծպնեցյանը:

Նախորդ տարում գյուղատնտեսության զարգացման համար առանձնակի կարևորվել է գյուղատնտեսական վերամշակող արդյունաբերության զարգացումը և այս բնագավառում ծառացած խնդիրների լուծումը:

2013 թվականին մթերումների գործընթացն ընթացել է սահուն: Նախարարության տվյալներով, նախորդ տարվա նկատմամբ ավելացել են պտուղբանջարեղենի և խաղողի մթերման ծավալները: Մթերված հումքի դիմաց վճարումները՝ շուրջ 31.5 մլրդ դրամ գրեթե ամբողջությամբ կատարվել են:

«Պետություն-մասնավոր հատվածի արդյունավետ համագործակցության համար կարևոր է ագրարային ոլորտում տարբեր միությունների ստեղծումը»,- ասաց Հրայր Ծպնեցյանը:

Այսպես, պտուղբանջարեղենի և կաթի վերամշակման ոլորտում առկա խնդիրների համատեղ լուծման նպատակով՝ 2014թ փետրվարի 26-ին ստորագրվել են համագործակցության հուշագրեր՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության և կաթնամթերք արտադրողների, ինչպես նաև Հայաստանի պահածոյագործների և հյութ արտադրողների միությունների միջև: Առաջիկայում կարևորվում է նաև գյուղատնտեսական մթերքներ արտադրողների միավորումների ձևավորումը, որը կնպաստի մասնավոր հատվածի և պետության արդյունավետ համագործակցությանը:

Հանրապետությունից արտահանված բուսաբուծական մթերքների ծավալների 2013թ. ցուցանիշները 2.1 անգամ գերազանցել են 2012 թ. մակարդակը: Իսկ այս տարվա մարտի 5-ի դրությամբ արտահանվել է 8200 տոննա բուսաբուծական մթերք, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշն ավելի քան 3 անգամ:

Հրայր Ծպնեցյանի կարծիքով, Մաքսային միությանն անդամակցության դեպքում, գյուղատնտեսության ոլորտի համար ակնկալվում են դրական արդյունքներ. մասնակից երկրների հետ արտաքին առևտրի աշխուժացումը, երրորդ երկրների նկատմամբ Մաքսային միության երկրներում հայրենական արտադրանքի մրցունակության բարձրացումը: Առաջին անհրաժեշտության պարենամթերքների ինքնաբավության մակարդակի ցուցանիշները վկայում են, որ հանրապետությունում, առաջիկա տարիներին նույնպես, պահանջարկի բավարարման համար, որոշ պարենամթերքների ներմուծումն իրականացվելու է մեծ ծավալներով: Հետևաբար, Մաքսային միության երկրների հետ նոր, փոխշահավետ կապերի ձևավորման միջոցով, գյուղատնտեսական ծագման արտադրատեսակների և գյուղատնտեսության մեջ օգտագործվող ռեսուրսների ներմուծման աշխարհագրության փոփոխման անհրաժեշտություն է զգացվում: Ներմուծումներն առավելապես կիրականացվեն Մաքսային միության երկրներից:

«Այն արտադրատեսակների համար, որոնք Մաքսային միության երկրներում չեն արտադրվում, սակայն հանրապետության պահանջարկի գերակշռող մասը բավարարվում է դրանց ներմուծման հաշվին, նախատեսվում է սահմանել անցումային ժամանակահատված, որի դեպքում վերջիններիս համար կկիրառվեն Հայաստանում ներկայումս գործող մաքսատուրքերը:»,- նշեց Հրայր Ծպնեցյանը:

Ոլորտի հիմնախնդիրներից են գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը: Վերջինս խոչընդոտում է արդյունավետ տեխնոլոգիաների, պահանջվող ագրոտեխնիկայի կիրառման և վերարտադրության ապահովմանը: Ստեղծված իրավիճակում դանդաղ են ընթացել գյուղացիական տնտեսությունների միավորումների, կոոպերացման սկզբունքով գործող կառույցների ձևավորման, հողերի խոշորացման խթանման գործընթացները: Վարչության պետի տեղեկացմամբ, այս ուղղությամբ շարունակվելու է գյուղատնտեսական կոոպերացիայի խթանմանն ուղղված քաղաքականությունը: Նախարարության կառուցվածքում ստեղծվելու է կոոպերացիայի աջակցության ստորաբաժանում: Նախատեսվում է «Գյուղատնտեսական կոոպերացիայի մասին» ՀՀ օրենքի ընդունումը:

«Կարևոր խնդիրներից է գյուղատնտեսության օրենսդրական դաշտի համալրումն ու կատարելագործումը, այս առումով՝ «Գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որի նախագիծը կառավարությունում քննարկման փուլում է»,-նշեց Հ. Ծպնեցյանը:

Չնայած որոշ դրական տեղաշարժերի, կարևորագույն հիմնախնդիր է մնում գյուղատնտեսական մթերքների իրացումը, վերջինիս խթանումը հանդիսանում է գյուղացիական տնտեսությունների կարողությունների հզորացման հիմնական նախապայմաններից մեկը: Իրացման համակարգի անկատարության պայմաններում, տարբեր միջնորդ օղակների առկայությունը հնարավորություն չի տալիս արտադրողներին անմիջականորեն զգալու գյուղատնտեսական մթերքների գների բարձրացումը, որը պետք է նպաստեր վերջիններիս հնարավորությունների ընդլայնմանը: Նախարարության կողմից մշակվել և ներկայումս կառավարությունում քննարկման փուլում է գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության զարգացման ռազմավարության նախագիծը, որով նախանշվում են բնագավառում ծառացած խնդիրների լուծման հիմնական ուղղությունները: Ճյուղի առջև ծառացած հիմնախնդիրներից է գյուղատնտեսության մեքենայական հավաքակազմի մաշվածությունը:

«Տարիներ շարունակ տեխնիկական միջոցների մատակարարման բնագավառում չեն կիրառվել մատչելի մեխանիզմներ և մեքենայական հավաքակազմը վերջին 22 տարվա ընթացքում նորացվել է փոքր չափով: Այս ուղղությամբ շարունակվելու են աշխատանքները նպատակահարմար տարբերակներով գյուղատնտեսական տեխնիկայի ներկրման և գյուղատնտեսությունում տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես՝ լիզինգային մեխանիզմներով տրամադրման ուղղությամբ: Անցյալ տարի, գյուղատնտեսության տեխնիկական վերազինման ուղղությամբ զգալի ձեռքբերումներ են արձանագրվել: Այս տարի այդ ուղղությամբ աշխատանքներ նույնպես իրականացվում են»,-իր խոսքն ամփոփեց պարոն Ծպնեցյանը:

Առաջիկա խնդիրներից է գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի աստիճանական ներդրումը: Այս ուղղությամբ որոշակի համագործակցություն կա «Ինգո Արմենիա» ապահովագրական ընկերության հետ: Համակարգի ներդրումը հնարավոր է իրականացնել փուլային եղանակով: Նախատեսվում է փորձնական ծրագիր իրականացնել անասնապահության ոլորտում:

Այս կամ այն ծրագրի իրականացման ընթացքն ու հաջող ավարտը պայմանավորված են ճիշտ ռազմավարության կիրառմամբ: Այս դեպքում կարդարացվեն ծրագրերից սպասվելիք արդյունքները, իրականություն կդառնան արված կանխատեսումները:

Նելլի Սահակյան

ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

ԳԻՆՈՒ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ

Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դյուսելդորֆ քաղաքում վերջերս տեղի ունեցավ «ProWein» գինիների և ալկոհոլային խմիչքների ամենամյա միջազգային մասնագիտացված ցուցահանդեսը: Զարգացման հայկական գործակալությունը, Գերմանիայի Միջազգային համագործակցության ընկերության (GIZ) «Մասնավոր հատվածի զարգացում՝ Հարավային Կովկասում» ծրագրի հետ համագործակցության շրջանակներում, նախաձեռնեց հայկական գինի արտադրող ընկերությունների՝ «Էդվագ Գրուպ» ՍՊԸ, «Գոլդեն Գրեյփ Արմ Աս» ՍՊԸ, «Մանչո Գրուպ» ՍՊԸ, «Սեմինա Քընսալթինգ» ՓԲԸ, «Երևանի շամպայն գինիների գործարան» ԲԲԸ, «ՄԱՊ» ՓԲԸ, «Շահումյան Վին» ՍՊԸ, «Երիտասարդ գինեգործների միություն» ՀԿ աշխատանքային ճանաչողական այց վերոնշյալ ցուցահանդես: Այցի նպատակն էր՝ ուսումնասիրել ցուցահանդեսի հնարավորությունները, ծանոթանալ մասնակից երկրների միասնական տաղավարներին, անցկացնել ընկերությունների հետ գործնական հանդիպումներ:

«Մասնավոր հատվածի զարգացում՝ Հարավային Կովկասում» ծրագիրը համաֆինանսավորում է հայկական ընկերությունների ճանաչողական այցը: Հայաստանը երբևէ ներկայացված չի եղել ցուցահանդեսին միասնական հայկական տաղավարով, ուստի այցը նաև նպատակ էր հետապնդում հայկական ընկերություններին նախապատրաստել 2015թ. միասնական հայկական տաղավարով ցուցահանդեսին հնարավոր մասնակցությանը:

«ProWein» գինիների և ալկոհոլային խմիչքների ամենամյա միջազգային մասնագիտացված ցուցահանդեսը 20 տարվա պատմություն ունի և ներկայումս համարվում է գինիների ու ալկոհոլային խմիչքների աշխարհի առաջատար ցուցահանդեսը:

ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐՆ ՈՒ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ

Հայաստանի Հանրապետության բնակլիմայական պայմանները հնարավորություն են տալիս վարել ինտենսիվ և բարձր արդյունավետությամբ գյուղատնտեսություն: Երկրի բնակչությանը գյուղատնտեսական որակյալ և բավարար քանակությամբ մթերքներով ապահովման գործում մեծ խոչընդոտ են հանդիսանում մշակաբույսերի հիվանդությունները, վնասատուներն ու մոլախոտային բուսականությունը: Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետություն են ներթափանցել արտաքին կարանտին օբյեկտ հանդիսացող մի շարք վնասակար օրգանիզմներ, որոնք հանրապետության սննդային անվտանգության համար մեծ ռիսկեր են պարունակում: Կարտոֆիլի ցեցն իր վնասակարությամբ, տարածման արագությամբ և պատճառած վնասի ծավալով, լուրջ մտահոգություն է առաջացնում: Ցեցը հիմնականում վնասում է կարտոֆիլի պալարները, որոնց հետագա օգտագործումը դառնում է անհնարին: Վարակված պալարի միջոցով, վնասատուն ներթափանցում է հող: Պայքարի միջոցառումներ չկատարելու դեպքում ընդհանրապես բերք չի ստացվում:

Օրերս ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը (ՊԳԿ), ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ համատեղ, կազմակերպել էր աշխատաժողով, որի նպատակն էր՝ բարելավել վերջերս տարածված վնասատուների՝ լոլիկի և կարտոֆիլի ցեցերի դեմ համակցված պայքարի աշխատանքները: Միջոցառմանը մասնակցում էին ՀՀ գյուղատնտեսության նախարարության, Մնդամթերքի անվտանգության պետական ծառայության, գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնների ներկայացուցիչներ, ֆերմերներ: Աշխատաժողովը կազմակերպվել էր «Հայաստանում կարտոֆիլի ցեցի դեմ համակցված պայքարի համակարգի մշակում» ՊԳԿ ծրագրի շրջանակներում: Ծրագրի հիմնական նպատակն է՝ վնասատուների դեմ պայքարի արդյունավետ համակարգի մշակման միջոցով, նվազեցնել բերքի կորուստները: Ներկաներին ողջունեց ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար Գ. Պետրոսյանը՝ ավելացնելով, որ վնասատուի առաջնային օջախները հայտնաբերելու նպատակով, անհրաժեշտ է ստուգման ենթարկել ներմուծված բուսական արտադրանքը, սահմանել խիստ կարանտինային ռեժիմ վնասատուի գրանցման շրջաններից՝ մորմազգի մշակաբույսերի հնարավոր տեղաշարժի սահմանափակման վրա՝ միաժամանակ իրականացնելով վնասատուների առաջնային օջախների տեղայնացմանն ուղղված ագրոտեխնիկական և ոչնչացման համալիր միջոցառումներ: ՊԳԿ հայաստանյան ներկայացուցչի օգնական Գայանե Նասոյանը նույնպես ողջունեց աշխատաժողովի մասնակիցներին՝ շեշտելով Հայաստանում վնասատուների դեմ համակցված պայքարի համակարգի մշակման կարևորությունը:

Այնուհետև՝ ՊԳԿ-ի տարածաշրջանային գրասենյակի ներկայացուցիչ Ա. Վերեսը ներկայացրեց տվյալներ՝ ՄԱԿ-ի մոտեցումը տարածաշրջանում ՎԻՊ ծրագրի իրականացման աջակցության և TCR /ARM/ 3401 նախագծի արդյունքներն ու երաշխավորումները լոլիկի և կարտոֆիլի ցեցերի դեմ պայքարի վերաբերյալ: Գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի այգեգործության զարգացման և բույսերի պաշտպանության բաժնի պետ Կ. Եսայանը ներկայացրեց զեկույց՝ 2010-2013թթ. Հայաստանում կարտոֆիլի և լոլիկի ցեցերի հասցրած վնասի և նոր օտարածին և սովորական վնասատուների դեմ պայքարի վերաբերյալ:

ՀՀ ԳՆ գիտական և գյուղատնտեսության աջակցության կենտրոնների համակարգման բաժնի աշխատակից Ի. Ծերեթելին և ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության, բուսասանիտարիայի տեսչության պետ Ա. Նիկոյանը ներկայացրեց Հայաստանում բույսերի պաշտպանությանն ուղղված խորհրդատվական ծառայություն մատուցող համակարգի նշանակության և ֆիտոսանիտարական տեսչության դերը նոր օտարածին և սովորական վնասատուների մոնիթորինգի և դրանց դեմ պայքարի գործում:

Աշխատաժողովի ընթացքում Ա. Տեր-Գրիգորյանը (ՀԱԱՀ բույսերի պաշտպանության ամբիոն) կարդաց զեկույց՝ լոլիկի և կարտոֆիլի ցեցերի նույնականացման, նմանության, տարբերության, կենսաբանական հատկությունների և վնասատուների դեմ պայքարի մեթոդների վերաբերյալ: Մասնակից ֆերմերներն ակտիվ քննարկման և հարցուպատասխանների միջոցով ներկայացրեցին պայքարի միջոցառումների ցանկը: Նշվեց, որ սահմանային հսկիչ կետերում անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել ներմուծվող լոլիկի և կարտոֆիլի խմբաքանակի վրա:

Աշխատաժողովի ընթացքում կազմակերպվեց նաև թիմային աշխատանք՝ պատրաստել կարտոֆիլի և լոլիկի ցեցերի դեմ պայքարելու համար անհրաժեշտ միջոցառումների ցուցակ, ազգային գործողությունների պլանի քննարկման և ֆերմերներին աջակցելու նպատակով, դրանց լուծման առաջարկվող ուղիների վերաբերյալ:

Նշվեց, որ ծրագրի շրջանակներում կհրապարակվեն վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի վերաբերյալ մի շարք տեղեկատվական թերթիկներ, որոնք հասանելի կլինեն ֆերմերներին և խորհրդատվական ծառայություն մատուցողներին: Իսկ աշխատաժողովին կհաջորդի լոլիկի և կարտոֆիլի ցեցերի նույնականացման, մոնիթորինգի, վաղ կանխարգելման և պայքարի վերաբերյալ ուսուցողական դասընթացը, որը նախատեսվում է ս/թ մայիսին:

Լիանա Շախնազարյան

ԱԿՑԻԱ

«ՄՈԼՈՐԱԿԻ ԺԱՄԸ» ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) հայաստանյան մասնաճյուղը, ՀՀ բնապահպանության նախարարությունը, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանը և Պրոմեթեյ բանկը համախմբվել են՝ մասնակցելու և Հայաստանում անցկացնելու «Մոլորակի ժամը» համաշխարհային ակցիան, որի նպատակն է՝ հասարակությանը, բիզնես աշխարհին, համայնքներին և այլ շահագրգիռ կողմերին միավորել՝ լույսերը մեկ ժամով անջատելու գաղափարի շուրջ՝ հանուն մեր մոլորակի կենսական պայմանների և ռեսուրսների պահպանման: Արդեն վեցերորդ տարին է, որ Հայաստանը մասնակցում է «Մոլորակի ժամ» համաշխարհային ակցիային:

«Մոլորակի ժամ» համաշխարհային ակցիան առաջին անգամ մեկնարկել է 2007 թ.-ին, Ավստրալիայի Սիդնեյ քաղաքում, որտեղ 2 միլիոն մարդ անջատել էին լույսերը՝ նպատակ ունենալով միավորել մարդկության ջանքերը կլիմայի փոփոխության դեմ մղվող պայքարում: Մասնակից քաղաքների թիվը տարեց տարի աճում է և 2013 թ. կազմել է 150 պետությունների 7000 քաղաքներ: Տարիների ընթացքում ակցիան ձեռք է բերել մեծ հեղինակություն՝ ապահովելով 1 միլիարդից ավել բնակչության մասնակցություն ողջ աշխարհում:

Այս տարի «Մոլորակի ժամ»-ին մասնակցել են աշխարհի ավելի քան 154 պետություններ, որը տեղի ունեցավ 2014 թ.-ի մարտի 29-ին, ժ. 20:30-ից 21:30-ը (տեղական ժամանակով): Երևան քաղաքում մեկ ժամով անջատվել է մայրաքաղաքի շենքերի և խորհրդանիշ հանդիսացող օբյեկտների արտաքին, ինչպես նաև փողոցային լուսավորությունը:

Բացի լույսերի խորհրդանշական մարումից, այդ օրը աշխարհում կազմակերպվում են զանազան միջոցառումներ: Այս տարի, Երևանում երիտասարդ ակտիվիստների նախաձեռնությամբ, և WWF հայաստանյան մասնաճյուղի աջակցությամբ, տեղի ունեցավ նաև երթ, որը մեկնարկեց Ազատության հրապարակից՝ շարժվելով դեպի Կասկադ:

Երթի նպատակն էր՝ հասարակությանը ներգրավել «Մոլորակի ժամը» ակցիային՝ խթանելով այլընտրանքային տրանսպորտի օգտագործման ծավալների ավելացմանը: Միջոցառմանը մասնակցում էին հանրապետության մի շարք քաղաքներ, այդ թվում՝ Գյումրին, Կապանը, Վանաձորը, Եղեգնաձորը, Մասիսը, Դիլիջանը:

Լ Շ

ՄԱՄՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՑՐՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՎՆԱՍՎԱԾ ԽԱՂՈՂԻ ԵՎ ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ

Հայաստանի Հանրապետությունում այս տարի գյուղատնտեսական մշակաբույսերի վեգետացիան շուտ սկսվեց, քանի որ մարտ ամսվա 3-րդ տասնօրյակին օդի ջերմաստիճանն արագորեն բարձրացավ՝ ցերեկվա ժամերին հասնելով մինչև +18 °C և ավելի: Այդպիսի բարձր ջերմաստիճանի պայմաններում սկսվեց վազերի առատ հյութաշարժությունն ու ձմեռող աչքերի բողբոջների սաղմնային աճը: Ձմեռող աչքերը, ուռչելով՝ տեղ-տեղ առանձին սորտերի վազերի վրա, սկսեցին բացվել: Իսկ պտղատու ծառերը գտնվում էին զանգվածային ծաղկման և պտուղների կազմավորման շրջանում:

Պտղատու այգիների խնամքը

Ելնելով ստեղծված իրավիճակից, պետք է սեղմ ժամկետում անցկացնել պտղատու տնկարկների սնուցման, ոռոգման և հողի մշակության աշխատանքներ: Կիրառվող միջոցառումները պետք է նպատակամղված լինեն առողջ մնացած ծաղկի և պտղասաղմի պահպանմանն ու հնարավորինս շատ որակյալ պտուղների ստացմանը:

Պարարտացման և սնուցման աշխատանքները կատարելիս, պետք է հաշվի առնել հողային պայմանները և այգիների վիճակը:

Եթե այգին աշնանը չի պարարտացվել, ապա՝ 1 հա-ի հաշվով, հողին տալ 20-30 տոննա հասունացած գոմաղբ, ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութեր՝ 60-90 կգ ազդող նյութի հաշվով, որը ֆիզիկական քաշով կկազմի 176-265 կգ ամոնիումային սելիտրա, 300-450 կգ հասարակ սուպերֆոսֆատ և 100-150 կգ կալիումի քլորիդ:

Պարարտանյութերը հող մտցնել միջշարքային տարածությունները վարելիս՝ կորիզավորների մոտ 16-18 սմ, իսկ հնդավորների մոտ՝ 20-22 սմ խորությամբ, ընդ որում՝ ծառերի բնի մոտ տարածությունը վարել 10-12 սմ, որպեսզի արմատային համակարգը չվնասվի: Մերձբնային տարածությունները փխրեցնել 8-10 սմ խորությամբ:

Շատ հավանական է, որ ծաղիկների և պտղասաղմերի վնասվածության հետևանքով ֆիզիոլոգիական կամ հունիսյան պտղաթափը կլինի շատ ուժեղ, հետևաբար, այն թուլացնելու և պտուղների լավ սնուցման և խոշորացման համար անհրաժեշտ է մայիսի երկրորդ կեսին տալ երկրորդ սնուցումը՝ վերը նշված նորմաներով:

Անհապաղ պատրաստել ջրման ակոսներ և ձեռնամուխ լինել ցրտահարված այգիների առատ ոռոգմանը: Ջրումները կազմակերպել այնպես, որ ծառերի արմատների տարածման հիմնական հողաշերտը (0.6-0.8 մետր խորությամբ) ապահովվի անհրաժեշտ քանակի ջրով:

Այգու լիարժեք ջրումները կնպաստեն ծառերի օրգաններում ջրի և սննդանյութերի տեղաշարժի արագացմանը, որը շատ կարևոր է ցրտահարության պատճառած վնասվածությունը մեղմելու համար:

Հողում խոնավությունը պահպանելու, մոլախոտերի դեմ պայքարելու և հողը ուժեղ կեղևակալումից պաշտպանելու նպատակով՝ ցանկալի է ծառերի մերձբնային տարածությունները մուլչապատել՝ օգտագործելով հրաբխային խարամ, տորֆ, ծղոտ: Այս միջոցառումն առանձնապես լավ արդյունք է տալիս չորային շրջաններում:

Խաղողի այգիների խնամքը

Հանրապետության ուղղաձիգ գոտիականության տարբեր տարածքների այգիներում կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ վազի ցրտահարության հասցրած վնասը միանշանակ չէ:

↳6

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ...

ՄԱՐԴԸ, ԺԱՄԱՆԱԿԸ ԵՎ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակի ընթացքում գիտնականները համոզվում են, որ մարդու նախնիները զարգացրել են իրենց ուղեղները՝ շնորհիվ Արևելյան Աֆրիկայի՝ որտեղից, ժամանակակից գիտության համոզմամբ, առաջացել է ողջ մարդկության հնագույն նախնին: Նրանց կարծիքով դրան նպաստել է կլիմայի փոփոխությունը՝ խոնավից դեպի ծայրահեղ չորային, ինչը բերել է ուղեղի այնպիսի շեշտակի զարգացման, որն ունակ է դարձել աբստրակտ մտածելու, խոսելու և ինքնագիտակցություն կառուցելու համար:

Լոնդոնի համալսարանի պրոֆեսոր Մարկ Մասլինի կարծիքով, մտածելու գործիքներով զինված մարդը, կարողացել է այդ պայմաններում բավարար ինտելեկտ զարգացնել՝ այդ ժամանակներում ավելի բարենպաստ Եվրասիա և Հարավային Աֆրիկա քոչելու համար:

Վերջին 5 միլիոն տարվա ընթացքում այս տարածշրջանին հատուկ երկրագնդի ուղեծրի՝ Արևի նկատմամբ զգայուն ցիկլիկ փոփոխությունների պատճառով (այսպես կոչված՝ Միլանկովիչի ցիկլեր), լիաջուր լճերի տեղում առաջացան ավազաբլուրներ: Նման ցիկլերի տևողությունը մոտ 200 000 տարի է, բոլորովին պայմանավորված չէ մարդու գործունեությամբ և կարող է առաջացնել սառցակալման դարաշրջաններ:

Այդ ժամանակահատվածում մի քանի փուլեր են եղել. մոտ 2,6 միլիոն տարի առաջ, ինչպես ասվեց, մեր նախնիները (Homo habilis, մարդ կարող) տեղափոխվել են Աֆրիկայի հարավ, իսկ 1,9 միլիոն տարի առաջ կայանում է արդեն ուղիղ քայլող մարդը (Homo erectus), որն այստեղից ճամփա է ընկել դեպի Ասիա:

Այս շրջապատկերի դիտումը հետաքրքիր է նրանով, որ ոչ մեկ չի գնահատել արդյոք լավ է դա, թե վատ: Մարդկության և կլիմայի հետ վերջին մեկ-երկու տարվա ընթացքում տեղի ունեցածը բուռն վեճերի առարկա է դառնում. հոռետեսներն ասում են՝ կործանվում ենք, այն դեպքում, երբ լավատեսները պնդում են հակառակը՝ ամեն ինչ լավ է, գնում ենք դեպի պայծառ ապագա: Նրանց միջև դատավոր լինելն անշնորհակալ գործ է, սակայն որոշ հաշվարկներ կարող են օգնել ամեն դեպքում ավելի ճիշտ, երբեմն՝ ոչ լիարժեք կողմնորոշում ունենալ:

Ընտրելով 10 հանգուցային բնագավառներ՝ այդ թվում առողջապահությունը, կրթությունը, պատերազմները, գենդերային հավասարությունը, օդի աղտոտումը, կենսաբազմազանությունը, կլիմայի փոփոխությունը, տնտեսագետները փորձում են պատասխանել այն հարցին, թե որն է խնդրի հարաբերական արժեքը յուրաքանչյուր տարում՝ սկսած 1900 թվականից մինչ հիմա և 2050-ի կանխատեսումներով:

Առայժմ ավարտված հաշվարկները գենդերային հավասարության և կլիմայի փոփոխության վերաբերյալ տպավորիչ են: 1900 թվականին կանայք կազմում էին համաշխարհային աշխատուժի միայն 15%-ը: Եթե հաշվի առնենք, որ միևնույն է, ինչ որ մեկը պետք է կատարի չվարձատրվող տնային աշխատանքը, իսկ կանանց ներգրավումն արտադրության մեջ պահանջում է նրանց ուսուցանելու լրացուցիչ ծախսեր, Համաշխարհային ՀՆԱ-ում այդ ծախսերն այն ժամանակ կազմում էին 17%, այժմ՝ ընդամենը 7%, իսկ 2050-ի համար նախատեսվում է 4%:

Կլիմայի փոփոխությունը 1900-ից մինչ այժմ, որքան էլ զարմանալի է, բայց տարեկան մեզ մաքուր եկամուտներ է բերել ՀՆԱ-ի 1,5%-ի չափով. պարզվում է, որ կլիմայի չափավոր տաքացումն ավելի շատ առավելություններ է բերում: Մի կողմից CO_2-ի աճը, որ գործում է, փոստորեն, որպես պարարտանյութ, բարերար է ազդում գյուղատնտեսության վրա և պայմանավորում ՀՆԱ-ի աճ 0,8 %-ով: Բացի դրանից, չափավոր տաքացումը նվազեցնում է մահացությունը սառեցումից շատ ավելի, քան այն աճում է շոգի հետևանքով: Ջեռուցման ծախսերի հետ նաև ապահովում է Համաշխարհային ՀՆԱ-ի ևս 0,4%-ով աճ, որ գնալով զարգացման միտում է ունենալու:

Ցավոք, կան նաև բացասական արդյունքներ, որոնք, 2070 թվականից, գնալով շատանալու են, ինչով և բացատրվում է այժմյան տագնապն ու մոբիլիզացումը: Այսպես, տաքացման ուղիղ հետևանք է ջրային սթրեսը, որի դեմ պայքարը կազմում է առայժմ ՀՆԱ-ի 0,2%-ը: Տուժում են նաև էկոհամակարգերը, ինչպիսին ջրաճահճային տարածքներն են. սրանց պաշտպանության համար ծախսվում է ՀՆԱ-ի 0,1%-ը:

Այսօրվա խոշոր էկոլոգիական պրոբլեմներից է օդի աղտոտումը. միայն կերակուրի պատրաստման և վատորակ վառելիքով ջեռուցման հետևանքով օդի աղտոտումից տարեկան մահանում է 3 միլիոնից ավելի մարդ: Միաժամանակ նշենք, որ 1900-ին այդ թիվը կազմում էր 19%, իսկ 2050-ին իջնելու է մինչև 1%: Լավատեսորեն են տրամադրում նաև կյանքի տևողության տվյալները. մինչև 1900թ. այն կազմում էր 32 տարի, այժմ՝ 69 և, մինչև 2050թ. այն հասնելու է 76 տարու: Տպավորիչ են մանկամահացության տվյալները. դեռ 1970-ին մանկական վտանգավոր հիվանդությունների դեմ հնարավոր էր աշխարհի երեխաների միայն 5%-ին պատվաստել, այն դեպքում, երբ 2000թ.-ին հնարավոր եղավ այդ թիվը հասցնել 85%-ի: Դրա շնորհիվ հնարավոր եղավ ամեն տարի փրկել 3 միլիոն երեխա՝ որքան ողջ XX դարի ընթացքում: Եվ, եթե նախորդ դարի սկզբում հիվանդությունները տանում էին ՀՆԱ-ի գրեթե երրորդ մասը, այժմ այդ թիվը նվազել է 3 անգամ, իսկ տենդենցը կպահպանվի առնվազն մինչև 2050 թվականը:

Կենսաբազմազանության նվազումը, XX դարի ընթացքում, պահանջել է ՀՆԱ-ի 1%-ը, որոշ դեպքերում՝ ավելին, բայց համակարգային ցուցանիշների մեծամասնությունը ցուցաբերում է բարելավման միտումներ, ինչը վկայում է, որ առկա գլոբալ հիմնախնդիրները կարող են կտրուկ նվազել, եթե դրա համար կան բավարար ռեսուրսներ: Չնայած դեռ առկա են լուրջ խնդիրներ առողջապահության, կրթության, շրջակա միջավայրի պահպանման բնագավառներում, օբյեկտիվ լուծումները թույլ կտան արդյունավետ լուծումներ գտնել այն խնդիրների համար, որոնք սրվելու են մոտ և հեռավոր ապագաներում:

Ա Հ

5֏ ՄԱՄՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՑՐՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՎՆԱՍՎԱԾ ԽԱՂՈՂԻ ԵՎ ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ

Այսպիսի պայմաններում նույնպես կարելի է այգիներից ստանալ խաղողի զգալի բերք, եթե ճիշտ և առանց ուշացման կազմակերպվեն խաղողի այգիների խնամքի աշխատանքները:

Նախ՝ վազերի էփից, շպալերայի վերանորոգումից և չոր կապից ու արքդաղը այգուց հանելուց հետո, անհրաժեշտ է, առանց ուշացման, բերքատու այգիների միջշարքային տարածությունները վարել 25-30, իսկ երիտասարդ այգիներինը՝ 18-20 սմ խորությամբ, դրա հետ մեկտեղ, հող մտցնել հանքային պարարտանյութեր՝ 100-145 կգ ազոտ նյութի հաշվով, այսինքն 1 հա-ի հաշվով, 500-600 կգ սուպերֆոսֆատ, 300 կգ ամոնիումային սելիտրա և շուրջ 250 կգ կալիումի քլորիդ: Նպատակահարմար է այգուն տալ նաև օրգանական պարարտանյութեր՝ կիսափտած գոմաղբ կամ, դրան համարժեք, այլ օրգանական պարարտանյութեր 1 հա հաշվով՝ 30-40 տոննա:

Առանց ուշացման, հարկ է, մինչև աչքերի բացվելը, անհրաժեշտ է միջշարքային տարածությունները վարել շարքերի երկարությամբ, վազերից շուրջ 30 սմ հեռավորությամբ բացել երկու ակոս և այգին ջրել այդ ակոսներով, ջրի բարակ շիթով:

Թմբային համակարգի այգիներում, մինչև ձմեռող աչքերի ուռչելը, պետք է ավարտել համապարած այգեփորը, պարարտացումը կատարել բնային եղանակով՝ վազի բնից շուրջ 30 սմ հեռավորությամբ փորել խաչաձև չորս փոս՝ 25-30 սմ խորությամբ, մեկ վազի հաշվով հասանելիք պարարտանյութերի քանակը լցնել այդ փոսերի մեջ և ծածկել: Արքդաղաջուրը տալ թմբային համակարգին բնորոշ եղանակով՝ ջուրը բաց թողնելով դեպի միջթմբային տարածությունները, մինչև դրանց լցվելը: Վեգետացիայի առաջին փուլում փված արքդաղաջուրը կուժեղացնի վերգետնյա օրգանների և հատկապես ձմեռող աչքերի բողբոջների սննդառությունը: Եթե կենտրոնական բողբոջները ցրտահարվել են, ապա լավ սննդառության պայմաններում, փոխարինող բողբոջների սաղմնային աճի ընթացքում, դրանց վրա կզարգանան սաղմնային ծաղկաբույլեր: Այս բոլորի շնորհիվ կբարձրանա վազերի բերքատվությունը:

Վազի վրա բազմաթիվ շվերի գոյացումից հետո, երբ կերևան ծաղկաբույլերը, բեխիկները և բերքատու շվերը կտարբերվեն ոչ բերքատուներից, անհրաժեշտ կլինի սկսել և մինչև ծաղկման սկիզբն ավարտել առաջին շվափման աշխատանքները:

Գարնանային ցրտահարություններից վնասված այգիներում առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել բուժման աշխատանքների կազմակերպմանը:

Գ.Ս. Սանթրոսյան
Հայաստանի ազգային ագրարային համալսարան
Գյուղատնտեսական գիտությունների թեկնածու

ՈՒՂԵՐՁ



Խոսե Գրացիանո դա Սիլվա
ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) գլխավոր տնօրեն

Որքա՞ն հաճախ եք առևտրի սրահ գնացել և փնտրել ցուցադրված ամենագեղեցիկ խնձորները կամ բանանները: Գեղեցիկ տեսք ունեցող մրգին տրվող մեր բնական նախապատվությունը նշանակում է, որ ընդամենն աննշան թերություն ունեցող միրգն ու բանջարեղենը տոննաներով թափվում է:

Սպառողների կամ մատակարար խանութների և ռեստորանների կողմից թափվող սնունդը խնդրի միայն մի կողմն է, թերևս:

Ցածր եկամուտ ունեցող երկրներում սպառողների վատնած պարենամթերքն այնքան էլ մեծ խնդիր չէ, սակայն սննդի արժեշղթայի սկզբնական օղակներում սննդի հսկայական ծավալներ են կորչում: Պարենի կորուստներն՝ ագարակներում, վերամշակման, տեղափոխման, պահեստավորման փուլերում, ինչպես նաև շուկաներում, խարխլում են պարենային ապահովության հիմքերը Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի բազմաթիվ վայրերում: Զարգացող երկրներում հետբերքահավաքային կորուստները կարող են հասնել արտադրության մինչև 60 տոկոսի:

Եվրոպայում, պարենային ողջ շղթայի ընթացքում, մեկ շնչի հաշվով, կորչող ու թափվող սննդի ընդհանուր ծավալը տարեկան կազմում է 280-300 կգ:

Ընդհանուր առմամբ, ամբողջ աշխարհում պարենային թափոնները և կորուստները հասնում են 1.3 միլիարդ տոննայի: Այն կազմում է պարենամթերքի համաշխարհային տարեկան արտադրության մեկ երրորդը: Արդյո՞ք սա ընդունելի է, երբ աշխարհում 842 միլիոն մարդ ապրում է քաղցի, թերսնման և սննդի անապահովության պայմաններում:

Ապագայում, երբ 2050թ. աշխարհի բնակչության թիվը հասնի 9 միլիարդի, սննդի պահանջը շարունակելու է աճել: Եթե կարողանայինք ընդամենը կիսով չափ նվազեցնել պարենի կորուստը և վատնումը, 2050թ. աշխարհի բնակչությանը կերակրելու համար անհրաժեշտ պարենամթերքը պետք կլիներ ավելացնել ընդամենը 25, այլ ոչ թե ներկա գնահատականներով պահանջվող 60 տոկոսով:

ՊԱՐԵՆԻ ԿՈՐՈՒՍՏ ԵՎ ՎԱՏՆՈՒՄ

Պարենային կորուստներն ու թափոնները նաև ահռելի վնաս են հասցնում շրջակա միջավայրին: Երբ սնունդը կորչում է կամ դեն նետվում, կորչում են նաև դրա պատրաստման համար ծախսված էներգիան, հողային և ջրային ռեսուրսները: Տարեկան 3.3 գիգատոննա ջերմոցային գազեր են արտանետվում այդպես էլ չօգտագործվող սննդի արտադրման համար:

Տնտեսական առումով կարելի է ասել հետևյալը. սննդի կորստի տարեկան ընդհանուր արժեքն, արտադրողի գների հաշվարկով, 750 միլիարդ ԱՄՆ դոլար է կազմում: Եթե դիտարկենք սա մանրածախ գների և բնապահպանական ծախսերի տեսանկյունից, ապա այդ թիվը շատ ավելի մեծ կլինի:

Ցանկացած տեսանկյունից՝ բարոյագիտական, տնտեսական, բնապահպանական, կամ մարդկանց սննդի անվտանգության առումով, մենք պարզապես չենք կարող հանդուրժել, որ արտադրված ամբողջ պարենի մեկ երրորդն ամեն տարի դեն նետվի:

Ահա թե ինչու պարենային կորուստների և թափոնների զրոյացումը ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի Մունի «Զրոյական քաղց» ծրագրի հինգ տարրերից մեկն է: Մենք համատեղ աշխատում ենք ՄԱԿ-ի համակարգում, ինչպես նաև այլ գործընկերների լայն շրջանակի հետ, որպեսզի լուծում տանք մեր պարենային համակարգերում առկա այս և այլ հիմնախնդիրներին:

Բուխարեստում տեղի ունեցած հանդիպման ընթացքում Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի գյուղատնտեսության և գյուղական զարգացման նախարարներն ուղղակիորեն կզբաղվեն այս խնդրով: Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում պարենային կորուստներին և թափոններին նվիրված նախարարների կլոր սեղանը երկու տարին մեկ կազմակերպվող և այս տարի Ռումինիայում անցկացվող ՊԳԿ Եվրոպայի տարածաշրջանային համաժողովի առանցքային կետերից է լինելու:

Սպառողների վարքագծի կարևորության հետ մեկտեղ, սննդի կորուստը և վատնումը պետք է դիտարկել որպես համընդհանուր քաղաքականության, այլ ոչ թե կենսակերպի ընտրության խնդիր:

Պարենային կորուստների և թափոնների խնդիրն այնքան մեծածավալ է ու բարդ, որ անհրաժեշտ է ներգրավել սննդի արժեշղթայի բոլոր մասնակիցներին: Խիստ անհրաժեշտ են մասնավոր հատվածի ներդրումները պարենամթերքի տեղափոխման, պահեստավորման և շուկայական ենթակառուցվածքներում, հարկավոր է նաև վերապատրաստման ծրագրեր իրականացնել ֆերմերների շրջանում՝ նրանց հաջող փորձին ծանոթացնելու նպատակով: Հանրային ոլորտը կարող է ստանձնել հետազոտական աշխատանքների, մեթոդաբանությունների մշակման գործը, ինչպես նաև այնպիսի քաղաքականություն որդեգրել, որը կխթանի մասնավոր հատվածի՝ կորուստների և թափոնների նվազեցմանն ուղղված ներդրումները:

Աշխարհի այս հատվածում գերիշխում են տրանսնջատված փոքրածավալ արտադրողները: Այս արտադրողները հաճախ անկարող են ներդրումներ կատարել սննդի շղթայի նոր տեխնոլոգիաների բնագավառում, ինչը թույլ կտա նվազեցնել արտադրանքի փչացումը և կորուստները: Փոքր ագարակների համար ևս մեկ խնդիր է շուկաների հասանելիության հարցը:

Կառավարությունները պետք է մտածեն արտադրողների կազմակերպությունների ձևավորմանը կամ զարգացմանը նպաստող քաղաքականության և աջակցության ծրագրերի ներմուծման ուղղությամբ: Այդպիսի համագործակցությունը փոքր արտադրողներին հնարավորություն կտա մեծացնել արտադրանքի ծավալները և ուղղակիորեն կապ հաստատել վերամշակողների կամ մանրածախ առևտրով զբաղվողների հետ, կամ նախնական սառեցման և պահեստավորման համատեղ կարողություն զարգացնել: Այն, իր հերթին, կնվազեցնի բերքահավաքից անմիջապես հետո, փչացման պատճառով առաջացող կորուստների և թափոնների ահռելի ծավալները, բացի այդ, նաև կերկարացնի թարմ արտադրանքի պահպանման ժամկետը՝ նպաստելով սպառողների կողմից թափվող սննդի քանակների պակասեցմանը:

Կառավարությունները կարող են նաև կատալիզատորի դեր խաղալ՝ պարենային կորուստների և թափոնների վերաբերյալ երկխոսություն նախաձեռնելով՝ գյուղատնտեսական սննդի որոշակի շղթաների (օրինակ՝ արմատապտուղներ և պալարապտուղներ, միրգ և բանջարեղեն, հացահատիկ) հիմնական դերակատարների ներգրավմամբ: Սա կբարելավի համակարգումն ու գործընկերությունը, ինչպես նաև ոլորտի լավագույն փորձը ցուցադրելու հնարավորություն կընձեռի:

Պարենային կորուստներից զատ, սննդի թափոնները հիմնականում սպառողների և մանրածախ վաճառողների վարքագծի և ընտրության հետևանք են: Հանրային իրազեկման բարձրացման քարոզարշավների միջոցով կառավարությունը հնարավորություն ունի նպաստել այն մոտեցման փոփոխությանը, իբր սնունդը դեն նետելն ավելի էժան կամ հարմար է, քան պարենային թափոններն օգտագործելը, կրկին օգտագործելը կամ կորուստների կանխելը:

Անհրաժեշտ է քննել սեփական համոզմունքներն ու գործելակերպը սննդին առնչվող հարցերում: Պետք է վերջ դնել սննդարար միջոցների և ռեսուրսների նմանօրինակ մսխմանը:

Համայնքային

Լավագույն ծրագրերը կֆինանսավորվեն

Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա (ՀԵԿԱ) ՀԿ-ն, որը ՀՀ Լոռու մարզում իրականացնում է «Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագիրն, այս անգամ աշխատանքային այցով եղավ Ալավերդիում:

Աշխատաժողովին մասնակցում էին նաև Հաղպատ, Օձուն, Աքորի, Արդվի, Հագվի, Ձիլիզա, Կաճաճկուտ և Ծաղկաշատ համայնքների ներկայացուցիչները: Ծրագրի «Տեղական տնտեսական զարգացման մոդելի» շրջանակում մասնակիցները ներկայացրեցին իրենց համայնքների մրցակցային առավելությունները, ամենակարևոր և հրատապ լուծումներ պահանջող հիմնախնդիրները, ինչպես նաև հիմնական և հեռանկարային ճյուղերը: Զարգացած գյուղատնտեսություն ունեցող մարզի համար առաջնահերթ է թե՛ անասնապահական, և թե՛ բուսաբուծական ծրագրերի իրականացումը: Առանձնապես կարևորվեց պտղի և հատապտղի արտադրության, մթերման և վերամշակման կազմակերպումը:

Անհատ ձեռնարկատեր Գայանե Թումոյանն, ով տնօրինում է Ալավերդիում գործող երիտասարդական ուսումնական կենտրոնը, պահածոյացման տեխնոլոգիայի վերաբերյալ դասընթացներ է կազմակերպում համայնքների բնակիչների համար:

Հագվի համայնքում գործող բազմաճյուղ անասնապահական տնտեսության ղեկավար Ռուզաննա Օնանյանը նախատեսել է, ծրագրի աջակցությամբ, հիմնել կաթի վերամշակման արտադրամաս. որպես հումք կօգտագործվի ինչպես սեփական, այնպես էլ այլ տնտեսություններում արտադրվող կաթը:

Ծաղկաշենի գյուղապետ Հրաչյա Պարանյանն էլ կարևորեց ժամանակակից սպանդանոցի կառուցումը և մսի իրացման գործընթացի բարելավումը:

Բոլոր ծրագրերն էլ նպատակաուղղված են գյուղի կանանց զբաղվածության մակարդակի բարձրացմանն ու սոցիալական խնդիրների լուծմանը: Համայնքների հիմնախնդիրների և ծրագրային լավագույն առաջարկների ներկայացման համար տրվեցին մրցանակներ:

«Մեր գերխնդիրը համայնքների համաչափ զարգացմանը նպաստելն է, և այդ գործընթացում կարևորում ենք կանանց ներգրավումը և մասնակցությունն առավել արդյունավետ ծրագրերում»,-նշեց ՀԵԿԱ-ի նախագահ Լիլիթ Ասատրյանը:

Հետաքրքրություն ներկայացնող և հեռանկարայնություն ունեցող ծրագրերի իրականացման համար կհատկացվեն դրամաշնորհներ: Եռամյա ծրագրի հաջորդ բաղադրիչը կանանց համար ձեռներեցության դասընթացների կազմակերպումն է:

Նելլի Սահակյան

Ծառատունկ

«Հայաստանի մանուկներ» հիմնադրամն ու «Հայաստան Ծառատունկ» ծրագիրը (ՀԾԾ) շարունակում են իրենց համագործակցությունը՝ հիմնադրամի հովանու ներքո գտնվող համայնքներում լայնածավալ ծառատունկ իրականացնելու հարցում:

Ծրագրի շրջանակներում օրերս ծառատունկ իրականացվեց Արմավիրի մարզի Շենիկ համայնքում կառուցվող զբոսայգում, որին մասնակցում էին նաև Հայաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Հեֆերնը և Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանը: Ծառատունկի ընթացքում տնկվել է շուրջ 800 ծառ և թուփ:

Ավելի վաղ ՀԾԾ-ն Շենիկ համայնքի դպրոցին ու սպորտային համալիրին նվիրաբերել էր ծառեր: Նախատեսվում է Շենիկ համայնքը հարևան գյուղերի համար դարձնել սպորտային միջոցառումների կենտրոն, իսկ ՀԾԾ-ն աջակցելու է նաև այս ծրագրի իրականացմանը:

Սահականուշ Արոյան
Արմավիրի ԳԱՄԿ

ՀԱԱՀ-ի ասպիրանտը՝ մրցույթի հաղթող

Օրերս ԿԳՆ գիտության պետական կոմիտեում տեղի է ունեցել «Ասպիրանտների և երիտասարդ հետազոտողների հետազոտությունների աջակցության ծրագիր-2013» մրցույթի հաղթողներին դրամաշնորհների վկայագրերի հանձնման արարողությունը: Նշված ծրագրում հաղթող է ճանաչվել ՀԱԱՀ-ի 2-րդ կուրսի ասպիրանտ Հայկուհի Միքայելի ներկայացրած թեման:

ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը, շնորհավորելով երիտասարդ գիտնականներին, նշել է, որ վերջիններիս գիտական գործունեության համար պետությունն առավել նպաստավոր պայմաններ կստեղծի՝ հաշվի առնելով նրանց ակադեմիական և գիտական աշխատանքի որակը:

Նշենք, որ մրցույթին մասնակցելու համար ստացվել է 99 հայտ: Գիտական փորձաքննության հիման վրա կազմվել է գիտական թեմաների նախնական վարկանիշային ցանկը, որի արդյունքներով ֆինանսավորման է երաշխավորվել 28 թեմա: Ընտրված թեմաների կեսը՝ 14-ը, բնական գիտությունների բնագավառից են, 6-ը ներկայացնում են ճարտարագիտություն և տեխնոլոգիա, 1-ը՝ բժշկական, 1-ը՝ գյուղատնտեսական, 4-ը՝ հասարակական, 2-ը՝ հայագիտություն և հումանիտար գիտություններ բնագավառները: Ֆինանսավորման երաշխավորված թեմաներից 8-ը ներկայացրել են ՀՀ ԳԱԱ ինստիտուտների ասպիրանտները և երիտասարդ հայցորդները: Հաղթող է ճանաչվել 8 թեմա՝ ԵՊՀ-ից, 3 թեմա՝ Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանից, 5-ը՝ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանից և 1-ական թեմաներ՝ Հայաստանի պետական տնտեսագիտական, Մ. Հերացու անվան բժշկական, Հայաստանի ազգային ագրարային և Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարաններից:

www.anau.am

Օրգանական գյուղատնտեսություն

Հերթական ուսուցում

Գեղարքունիքի Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի և «Վորլդ Վիժն-Հայաստան» Գավառի տարածքային զարգացման ծրագրի համագործակցության շրջանակներում հերթական սեմինարն է անցկացվել գյուղական համայնքներում:

Եռօրյա սեմինարներ կանցկացվեն Գանձակ, Արծվաքար և Ծովազարդ համայնքներում՝ «Օրգանական գյուղատնտեսության վարման նպատակով օրգանական պարարտանյութերի պատրաստման ձևերն ու կիրառման եղանակները» թեմայով: ԳԱՄԿ-ի գյուղատնտեսության խորհրդատու և սեմինարը վարող Տիգրան Սհոյանի հավաստմամբ, սեմինարի տեսական փուլին հաջորդելու է գործնականը, որտեղ կպատրաստվեն օրգանական պարարտանյութերն ու կօգտագործվեն համապատասխան ցանքերում՝ դաշտային օրերի անցկացման միջոցով:

Տ.Հակոբյան
Գեղարքունիքի ԳԱՄԿ

Հանդիպում

Ներդրումային ծրագրեր

Երևանում ընթացող «Պատասխանատու հանքարդյունաբերության կայացումը, հնարավորություններ և մարտահրավերներ» խորագիրը կրող միջազգային համաժողովի շրջանակներում, օրերս Վայոց ձորի մարզպետ Է. Ղազարյանը հանդիպում ունեցավ Lydian International նախագահ Հովարդ Ստեվենսոնի, գործադիր փոխնախագահ Դիդիեր Ֆոհլենի և «Գեոթիմ» ընկերության գլխավոր տնօրեն Հայկ Ալոյանի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են ընկերության առաջիկա գործունեության և ներդրումային ծրագրերին առնչվող հարցեր: Առանձին անդրադարձ է կատարվել ընկերության կողմից ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ, Գնդեվազ և Սարավան համայնքներում իրականացվող սոցիալական ծրագրերին, ինչպես նաև Ջերմուկ քաղաքի ռազմավարական զարգացման ծրագրով նախատեսված զբոսաշրջության ոլորտում իրականացվելիք ներդրումային ծրագրերին:

Կանանց համար

Գարնանային գույների ցուցահանդես

Կանանց տոների կապակցությամբ վերջերս Իջևանի «Վերնատուն» ՓԲԸ-ի պատկերասրահում բացվեց «Գարնանային գույներ» խորագրով ցուցահանդեսը:

Ցուցասրահում ներկայացված էին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կիրառական արվեստի ֆակուլտետի դասախոսների և ուսանողների շուրջ 40 աշխատանքներ: Բացման հանդիսավոր արարողությանը ներկա էին մարզային և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ, ոստիկանության աշխատակիցներ, դասախոսներ և ուսանողներ: Կանանց տոնին նվիրված ցուցահանդեսի հատուկ հյուրերն էին զոհված ազատամարտիկների մայրերը:

Իրենց տրամադրող գույներով ներկայացված կտավները պատկերասրահը պարուրել էին գարնանային ջերմ և զվարթ տրամադրությամբ: Արվեստի գործերի մասին իր հիացմունքի խոսքն արտահայտեց Տավուշի մարզպետ Արմեն Ղուլարյանը: Մարզպետը նշեց, որ ունենալով նման տաղանդավոր արվեստագետներ՝ կարևոր է համարում մարզում արվեստի մթնոլորտի ձևավորումը: Բացման խոսքով հանդես եկան նաև ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Սամվել Առաքելյանը, Իջևանի քաղաքապետարանի կրթության և մշակույթի հարցերով պատասխանատու Լիլիթ Ղալումյանը, վանահայր Սամվել Աբեղա Մխիթարյանը:

Տ.Նագինյան
Տավուշի ԳԱՄԿ

Նախաձեռնություն

Բրդի լվացման արատադրամաս

Սյունիքի մարզպետ Վ. Հակոբյանն այցելել է Գորիսի «Կանանց ռեսուրսկենտրոն»: Կենտրոնի պատասխանատու Ռ. Տոռոզյանը մարզպետին ներկայացրել է կազմակերպության ծրագրերը և կատարված աշխատանքները:

Կենտրոնը ներկայումս փորձում է աջակիցներ գտնել՝ մարզի ամենամեծ գյուղերից մեկում՝ Գորիսի տարածաշրջանի Շիկուհայր գյուղում, բրդի լվացման արտադրամաս հիմնելու համար, որտեղ կարող են աշխատել տարածաշրջանի կանայք:

Ակնկալվում է, որ այս ծրագիրը մի քանի տասնյակ անձանց հնարավորություն կտա աշխատանք գտնել: Մարզպետը պատրաստակամություն է հայտնել նորոգել արտադրամասի տարածքն ու աջակցել աշխատանքներին: Նա նշել է, որ զբաղվածության հարցի լուծումն առաջնային է:

Վ. Հակոբյանը, կարևորելով կանանց համար աշխատատեղ ստեղծելու հարցը, խոստացել է հնարավորինս աջակցել՝ ծրագիրը կյանքի կոչելու նախաձեռնությանը:

Հայտարարություն

Երևան քաղաքի Արաբկիր-Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարույթում է գտնվում թիվ ԵԱՔԴ/2747/02/13 քաղաքացիական գործն ըստ Էլիզա Հունանյանի դիմումի՝ Նիկոլայ Ֆրիդոնի Թոխյանին անհայտ բացակայող ճանաչելու պահանջի մասին:

Քաղաքացիական գործի ընթացքը լուծելու համար խնդրվում է հայտնել դատարանին, թե Նիկոլայ Ֆրիդոնի Թոխյանի /ծնված 17.10.1973թ., հաշվառված ՀՀ, քաղաք Երևան, Ա. Խաչատրյան փողոց, 33 շենքի թիվ 9 բնակարան/ վերաբերյալ, վերջին մեկ տարվա ընթացքում, ինչ տվյալներ կան:

ՀԵՏԱՔՐՔԻՐ, ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ

ՀԱՄԵՄՈՒՆՔՆԵՐԻ ԱՇԽԱՐՀ

Համեմունքները սուր հոտ և համ ունեցող թարմ ու չորացրած բույսերի ծաղիկներն են, տերևները, արմատները,սերմերը, պտուղները և դրանցից պատրաստված հեղուկները, մածուկներն ու փոշիները: Համեմունքային բույսերի սուր հոտն ու զանազան բուրմունքները պայմանավորված են այդ բույսերի տարբեր հատվածներում պարունակվող եթերայուղերով: Համեմունքներն օգտագործվում են խոհարարության, սննդի արդյունաբերության (պահածոներ, հրուշակեղեն, հացաբուլկեղեն, լիկյոր, օղի և այլն), օծանելիքի արտադրության և բժշկության մեջ: Կերակուրների և պահածոների համար օգտագործում են սոխ, սխտոր, համեմ, ռեհան, մանանեխ, թարխուն, անանուխ, սև, սպիտակ, կարմիր ու բուրավետ պղպեղներ, դափնու տերև և այլն: Ըմպելիքների, մուրաբաների, հրուշակեղենի, հացաբուլկեղենի պատրաստման համար օգտագործում են դարչին, մեխակ, կոճապղպեղ (իմբիր), հիլ, անիսոն, վանիլ, մշկընկույզ, սև սոնիճ և այլն: Պանրի որոշ տեսակների խառնում են ուրց, թարխուն, սոխ, սոխուկ և այլ բանջարներ:

Համեմունքային բույսերը տարածված են գրեթե ամբողջ աշխարհում, սակայն առավել արժեքավոր են արևադարձային երկրներում աճողները (մեծ մասամբ՝ ծառեր): Դրանցից են՝ դարչինը, մեխակը, մշկընկույզը, վանիլը, հիլը, բուրավետ ու սև պղպեղները և այլն: Հնագույն ժամանակներից դրանք մշակվել են նաև Հայաստանում. տարածված համեմունքային բույսերից են թարխունը, կորդինը, ռեհանը, նեխուրը, համեմը, քիմիոնը, քրքումը, սամիթը, անանուխը, մաղադանոսը, մանանեխը, սոխը, սխտորը, ուրցը և այլն: «Ագրոլրատու» թերթը պարբերաբար կանդրադառնա վերոնշյալ համեմունքներին՝ ներկայացնելով նրանց կարևորությունն ու առանձնահատկությունները:

ՆԵԽՈՒՐ

Հին հույները Նեխուրը (քարավուզ) անվանում էին «լուսնային բույս», տոների ժամանակ դրանով զարդարում էին տները: Միջերկրական ծովափի երկրներից եկած այս բույսը հնում միստիկական հատկություններով օժտված են համարել, որը երիտասարդություն և կիրք է պարգևում: Քարավուզը կամ Նեխուրը սննդի մեջ առաջինը գերմանացիներն են սկսել օգտագործել՝ 15-16-րդ դարերում: Ռուսաստանում այն լայնորեն գործածվել է Եկատերինա 2-րդի օրոք: 18-րդ դարում սկսեցին օգտագործել քարավուզի արմատները: Այժմ այն լայն տարածում ունի բոլոր երկրներում:

Գոյություն ունի Նեխուրի մի քանի տեսակ: Տերևավոր Նեխուրն (Aplum Graveolens secallnum) ունի խոշոր, սուր հոտով տերևներ: Այն վիտամինների իսկական շտեմարան է: Կոթունավոր Նեխուրն (Aplum Graveolens dulce) ունի երկար՝ 60-70 սմ-անոց սպիտակ, կանաչ կամ վարդագույն կոթուններ: Նրանից պատրաստում են աղցաններ, խաշում են կամ տապակում՝ գերադասելով թարմ վիճակը: Արմատավոր Նեխուրը (Aplum Graveolens rapaceum), ունի խոշոր, մսոտ արմատ, որն ուտում են պանիրով՝ որպես աղցան, ավելացնում են տարբեր ապուրների և այլ կերակուրների մեջ: Վայրի Նեխուրը հանդիպում է Միջերկրական ծովափի երկրներում՝ գետերի, լճերի ափին: Նեխուրը պարունակում է բազմաթիվ վիտամիններ՝ A, B1, B2, B3, B5, B6, C, PP, U, E, K, բջջանյութ, եթերայուղ, կալիում միկրոտարրեր, կալցիում, ցինկ, երկաթ, ֆոսֆոր: Հիպոկրատը գրել է, որ նյարդային խանգարումների դեպքում Նեխուրը պետք է և՛ սնունդ լինի, և՛ դեղամիջոց: Նեխուրը հատկապես հարուստ է մագնեզիումով, որի պակասը հանգեցնում է անհանգստության ու վախի զգացումի, մարդը դառնում է դյուրագրգիռ, շուտ է հոգնում, գերզգայուն է դառնում եղանակի փոփոխությունների հանդեպ: Ժողովրդական բժշկությունը Նեխուրի եփուկը խորհուրդ է տալիս փորկապության, միգրենի, միգաքարային հիվանդությունների, ռևմատիզմի, հոդատապի, երիկամների հիվանդության, նյարդային խանգարումների ժամանակ: Նեխուրը բարձրացնում է օրգանիզմի դիմադրողականությունը, այն նպաստավոր է ֆիզիկական և մտավոր աշխատանքով զբաղվողների համար:

Նեխուրն օրգանիզմում ավելորդ ճարպերն այրելու բուսական ծագում ունեցող լավագույն միջոցն է, այն պարզապես անփոխարինելի է ճարպակալման դեմ: Նեխուրի արմատների թարմ հյութը պետք է խմել 1-2 թեյի գդալ, ուտելուց կես ժամ առաջ՝ օրը երեք անգամ: Մենդաբանները նիհարել ցանկացողներին խորհուրդ են տալիս ամենօրյա ճաշացանկի մեջ ներառել թարմ Նեխուր՝ աղցանների և ապուրների տեսքով:

Նեխուրի պատրաստուկները խոչընդոտում են աթերոսկլերոզի զարգացմանը և իջեցնում արյան ճնշումը: Այս հիվանդությունների կանխարգելման համար խորհուրդ է տրվում Նեխուրն ընդգրկել կերակրացանկում: Օգտակար է Նեխուրի հյութը խմել այլ մրգերի ու բանջարեղենների հյութի հետ միասին: Նեխուրն ամրացնում է սրտամկանը, կարգավորում է նյութափոխանակությունը: Սերմերը լայնորեն օգտագործվում են դեղագործության և օծանելիքի արտադրության մեջ: Պետք է հիշել, բուժիչ հատկություն ունի առաջին հերթին թարմ քարավուզը: Քարավուզի ընդամենը 2 բարակ ցողունները բավարարում են օրվա մեջ մեզ անհրաժեշտ վիտամին A-ի և C-ի 15% քանակությունը: Քարավուզի 2 ճաշի գդալ հյութն պարունակում է 2,7 կալորիա՝ ապահովելով մեզ օրվա ընթացքում անհրաժեշտ վիտամինների քանակը: Քարավուզի հյութը հրաշալի մաքրում է արյունը, բուժում մաշկային նույնիսկ «ամենահամառ» հիվանդությունները:

**ՀԱՐԳԵԼԻ ԸՆԹԵՐՑՈՂ,
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ԿԱՐՈՂ Է ՏՐԱՄԱԴՐԵԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՁԵՋ ՀՈՒԶՈՂ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ:**
Հարցերը կարող եք ուղարկել E-mail: asrc@cln.am
էլեկտրոնային հասցեին:

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է
«ԱԳՐՈԼՐԱՏՈՒ» թերթի և «ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագրի
2014թ. բաժանորդագրությունը

«Ագրոլրատու» թերթ
1 տարվա գինը՝ 3960 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ
1 համարինը՝ 120 դրամ

«Ագրոգիտություն» ամսագիր
1 տարվա գինը՝ 8100 դրամ
6 ամսվանը՝ 4050 դրամ
1 համարինը՝ 1350 դրամ

Բաժանորդագրությունն իրականացնում են՝
Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները, «Հայփոստ», «Հայմամուլ», «Պրես-Ատպաշե» կազմակերպությունները:

Ագրոլրատու
AGRONEWS
Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԴԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
«Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ
Տնօրեն՝ ԱՐԹՈՒՐ ԱՎԱԳՅԱՆ
Համարի պատասխանատու՝ Լիանա Շախնազարյան

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 Մ 000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 29
ստորագրված է տպագրության 04.04.2014 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում,
Երևան, Մամիկոնյանց 39ա